«Հաստատում եմ»
Մոր և մանկան առողջության պահպանման
գիտահետազոտական կենտրոնի տնօրեն
բ.գ.դ. պրոֆեսոր Գ. Գ.Օկրոս

24 օգոստոսի 2023թ.

Կարծիք
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ռուզաննա Էդուարդի Ազատյանի

«Սեռական խանգարումների կլինիկական դրսևորումների կապը մանկության վնասակար փորձառության հետ» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԴ00.07 «Նյարդաբանություն, հոգեբուժություն և թունաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ներկայացված աշխատանքը նվիրված է մանկության վնասակար փորձառության (ՄՎՓ) և սեռական խանգարումների կապի ուսումնասիրությանը և վերջիններիս կանխարգելմանը:

Ժամանակակից բժշկության զարգացման ուղիները, ախտորոշման և բուժման նորագույն մեթոդները նպատակ են նհետապնդում հիմնական շեշտը դնել հիվանդությունների կանխարգելման վրա:

Պարզված է, որ ՄՎՓ-ն հասուն տարիքում տարբեր հիվանդությունների, այդ թվում և սեռական խանգարումների համար հանդիսանում է ռիսկային գործոն: Ահա թե ինչու օրեցօր աճում է ՄՎՓ-ի վերաբերյալ տարբեր լայնածավալ հետազոտությունների թիվը, որոնք հիմնականում ունեն կանխարգելիչ նշանակություն:

Գրականության վերլուծությունը վկայում է, որ հասուն կանանց 40-45% և հասուն տղամարդկանց 20-30% ունեն առնվազն մեկ արտահայտված սեռական խանգարում: Ըստ 2020թ. տվյալների ՀՀ-ում անպտղության տարածվածությունը կազմում է 16.8%:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա է պատճառահետևանքային կապ անպտղության և սեռական խանգարումների միջև, պարզ է դառնում դրանց վաղ հայտնաբերման և կանխարգելման կարևորությունը:

Համաձայն ԱՀԿ տվյալների, տարեկան ավելի քան 1 մլրդ երեխա ենթարկվում է տարբեր տեսակի բռնության՝ առցանց և իրական կյանքում՝ տանը, դպրոցում և իրենց համայնքներում: Երեխան կարող է դառնալ բռնության զոհ, ականատես լինել կամ ներքաշվել բռնությամբ ուղեկցվող գործընթացներում:

Կատարված գիտական հետազոտությունները բացահայտել են, որ վաղ կյանքի փորձառությունն ունի կայուն ազդեցություն երկարաժամկետ ապահարմարվողականության վրա, դրանք հիմք են կանխատեսելու արդեն հասուն տարիքում ֆիզիկական և հոգեկան առողջության, սոցիալական հարաբերությունների տեսակետից: Գրականության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնությունը լրջորեն ազդում է ինչպես երեխաների այնպես էլ արդեն հասուն տարիքում մարդկանց հոգեկան առողջության վրա: Բռնության ենթարկվելը հաճախ վնասվածքածին է և կարող է առաջացնել սթրեսային այնպիսի վիճակներ, որոնք հանգեցնում են ֆիզիոլոգիական, հոգեկան և սոմատիկ խանգարումների և վարքային այնպիսի շեղումների, ինչպիսին են դեպրեսիան, հետվնասվածքային սթրեսային խանգարումները, անձի ասոցիատիվ շեղումները, տագնապային խանգարումների զարգացումը, թմրանյութերի չարաշահումը, քնի և ալիմենտար խանգարումները և ինքնասպանությունը:

ՀՀ-ում այս խնդիրների շուրջ հետազոտություններն ամբողջովին չեն արտացոլում առկա իրավիճակը, թույլ չեն տալիս կատարել հիմնարար եզրակացություններ, հետևաբար և մշակել կանխարգելիչ միջոցառումներ, իսկ այլ երկրների փորձը տարածելը մեր ազգաբնակչության վրա մեթոդաբանորեն ճիշտ չէ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ազգի մշակութային, հոգեբանական, կրոնական և այլ առանձնահատկությունները:

Այդ իսկ պատճառով դրանց բազմակողմանի ուսումնասիրությունը ՀՀ առողջապահական և այլ համակարգերի կարևորագույն խնդիրներից է:

Վերը նշվածը հիմնավորում է Ռուզաննա Ազատյանի ատենախոսական աշխատանքի արդիականությունը:

Ատենախոսության նպատակն է՝ կատարելով սեռական խանգարումների և մանկության վնասակար փորձառության համալիր ուսումնասիրություն ՀՀ-ում, մշակել դրանց կանխարգելմանն ուղղված առողջապահական ծրագիր:

Գիտական թեմայի նորույթը կայանում է բարոյական, վիճակագրական և բժշկական նորմայի համադրության մեջ սեռական խանգարումների և վնասակար մանկության

փորձառության միջև կորելյացիոն կապի հետազոտությունը՝ հաշվի առնելով էթնիկ առանձնահատկությունները և ընտանիքում սեռադերային վարքագծի շեշտվածությունը:

Առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում իգական սեռի անձանց շրջանում ուսումնասիրվել է մանկության վնասակար փորձառության ազդեցությունը սեռական խանգարումների ձևավորման և զարգացման վրա: Հիմնավորվել է, որ գոյություն ունի մանկության վնասակար փորձառությամբ պայմանավորված, ռիսկային վարքագծի ձևավորման և սեռական խանգարումների միջև կորելյացիոն փոխկապվածություն:

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 114 էջի վրա, բաղկացած է ներածությունից, գրականության տեսությունից, հետազոտության նյութի և մեթոդների գլխից, սեփական հետազոտության արդյունքներից, ամփոփումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից: Գրականության ցանկն ընդգրկում է 93 սկզբնաղբյուրներ, որոնցից 91-ը օտարալեզու: Աշխատանքը ձևավորված է 13 աղյուսակներով և 11 նկարներով:

Ատենախոսության նախաբանում հստակ ձևակերպված են աշխատանքի արդիականությունը, նպատակը և դրան հասնելու խնդիրները, ներկայացված են աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Հետազոտությունն իրականացվել է ԵՊԲՀ սեքսոպաթոլոգիայի կլինիկայում: Հետազոտության հիմք են հանդիսացել բուժօգնության համար կլինիկա այցելած սեռական խանգարումներ ունեցող 85 անձինք: Հսկողական խումբը կազմել են նույն տարիքային խմբի և գործնականում առողջ 221 կամավորներ, որոնք հավաքագրվել են ԵՊԲՀ ուսանողներից, կլինիկական օրդինատորներից, բուժաշխատողներից, նրանց ծանոթներից և ընկերներից, ինչպես նաև այլ կամավորներից՝ պատահական ընտրանքի միջոցով Հայաստանում:

Հետազոտության գործիքներն են եղել այցելուների կլինիկական հարցազրույցը և օբեկտիվ զննումը: Տվյալները հավաքագրվել և լրացվել են ԵՊԲՀ սեքսոլոգիայի ամբիոնի կողմից մշակված այցելուի սեքսոլոգիական քննության քարտում: Որպես դիտարկման միավոր է ընդունվել հիվանդության պատմությունը կամ ամբուլատոր հետազոտության անկետավորման քարտը:

Հետազոտության նպատակին հասնելու և առկա խնդիրները լուծելու համար օգտագործվել են հետազոտության հարցազրույցի/հարցման մեթոդը, մանկության

վնասակար փորձի՝ ACE հայերեն թարգմանված հարաշար՝ ա) մանկության վնասակար փորձի չափագրման համար և բ) սեռական ֆունկցիայի փոփոխման գնահատման (ՍՖՓԳ) հայերեն թարգմանված հարցաշար:

Մանրակրկիտ ուսումնասիրվել է մանկության վնասակար փորձառության ազդեցությունը կանանց սեռական խանգարումների վրա: Վերլուծության արդյունքում հիմնավորվել է մանկության վնասակար փորձառությամբ պայմանավորված ռիսկային վարքագծի ձևավորման և սեռական խանգարումների միջև կապի առկայությունը:

Բացահայտվել են մի շարք օրինաչափություններ ու առանձնահատկություններ: Պարզվել է, որ պացիենտների խմբում ավելի բարձր էին մանկության վնասակար փորձառության միավորները՝ ի համեմատ հսկիչխմբի: Հետազոտված պացիենտների հիմնական մեծամասնությունը՝ 74,1%, ենթարկվել է մեկ կամ ավելի ՄՎՓ գործոնի ազդեցության, իսկ 27,2%-ը՝ 4 կամ ավել, այն դեպքում, երբ հսկիչ խմբում նույն ցուցանիշները կազմել են 56,1% և 18,1% համապատասխանաբար:

Բացահայտվել է, որ ծնողների ամուսնալուծությունը կամ ծնողի բացակայությունը, ինչպես նաև բռնության ենթարկված մայրը եղել են առավել տարածված ցուցանիշները հետազոտվածների խմբում: Ստացված արդյունքները թույլ են տվել արձանագրել, որ որքան մեծ է եղել ՄՎՓ ցուցանիշը, այնքան մեծ է եղել անբարենպաստ հետևանքների հավանականությունը: Հետազոտվածների ¼-ն ունեցել է 4-ից մեծ ցուցանիշ, ինչը զգալի բարձր է և վկայում է ռիսկային վարքագծի առկայության մասին:

Քանի որ ապացուցված է հավաստի կապի առկայություն ՄՎՓ որոշ ցուցանիշների և սեռական խանգարումների միջև, ուստի գործնականում ռիսկային վարքի ձևավորման կանխարգելմանն ուղղված համապատասխան ծրագրերի և ուղեցույցների մշակումը և ներդնումը թույլ կտա իրականացնել կանանց սեռական խանգարումների կանխարգելում:

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա, որտեղ առկա է ռիսկային վարքագծի և սեռական խանգարումների միջև վիճակագրորեն հավաստի կապ, պարզ է դառնում գործնականում ռիսկային վարքագծի ձևավորման կանխարգելմանը ուղղված համապատասխան ծրագրերի և մեթոդաբանական ցուցումների մշակումը, ինչը կնպաստի կանանց շրջանում որոշ սեռական խանգարումների կանխարգելմանը:

Հետազոտության վերջնական փուլում հեղինակը ներկայացրել է սեռական խանգարումների և արդեն իսկ հայտնաբերված ՄՎՓ-ի կանխարգելմանն ուղղված առողջապահական ծրագիր, որը լավ հնարավորություն է տվյալ հիմնախնդրի արդյունավետ լուծման համար:

Հեղինակի կողմից աշխատանքի իրականացումը հիմնված է բավարար թվով դիտարկումների վրա: Աշխատանքի իրականացման ընթացքում ստացված արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության՝ օգտագործելով SPSS 22 վիճակագրական ծրագիրը, ինչը թույլ է տալիս ստացված արդյունքները գնահատել հավաստի:

Ատենախոսության մեջ ձևակերպված գիտական դրույթները հիմնավորված են, դրանք համապատասխանում են ատենախոսական աշխատանքի նպատակին և խնդիրներին:

Նյութի անհրաժեշտ ծավալն ու ստացված արդյունքները հեղինակին հնարավորություն են տվել կատարել հիմնավորված եզրահանգումներ և գործնական առաջարկություններ:

Ատենախոսության բովանդակությունը ընդհանուր առմամբ ներկայացված է հստակ և ընթեռնելի: Ներկայացված եզրակացությունները ձևակերպված են հակիրճ և հստակ: Գիտական աշխատանքում նշված գործնական առաջարկությունները իրատեսական են և կիրառելի: Ատենախոսական աշխատանքի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ չկան: Ատենախոսական աշխատանքում աղյուսակները մեծ են, պարունակում են մեծ քանակով տվյալներ, որոնք մի փոքր դժվարեցնում են նյութի ընկալումը:

Սեղմագիրը ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդականությանը:

Ատենախոսությանը ծանոթանալու ընթացքում առաջ են եկել հարցեր, որոնց պատասխանը կցանկանայինք ստանալ:

1. Արդյո՞ք արձանագրվել է կապ մանկական վնասակար փորձառության և կանանց անպտղության միջև:
2. Աշխատանքում նշվում է, որ այլ երկրների և այլ ազգերի վերաբերյալ տվյալները մեթոդաբանորեն ճիշտ չէ տարածել մեր երկրում, հաշվի առնելով կոնկրետ ազգի մշակութային, հոգեբանական, կրոնական և այլ առանձնահատկությունները: Այդ

դեպքում ինչպե՞ս հասականալ, որ գործնական առաջարկություններում առաջարկվում է մշակել և ՀՀ-ում իրականացնել Կալիֆորնիայի ACEs Aware ծրագրի նման ծրագիր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ռուզաննա Էդուարդի Ազատյանի «Սեռական խանգարումների կլինիկական դրսևորումների կապը մանկության վնասակար փորձառության հետ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից բժշկության կարևոր խնդիրներից մեկին, հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Իր բովանդակությամբ, ծավալով, նյութի մշակման և վերլուծության մակարդակով, ստացված արդյունքներով և գիտական նշանակությամբ այն համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդը արժանի է բժշկական գիտությունների գիտական աստիճանի ԺԴ 00.07 «Նյարդաբանություն, հոգեբուժություն և թունաբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է Մոր եւ մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի 2023թ. օգոստոսի 24-ի նիստում (արձանագրություն թիվ 2),որին ներկա էին գիտական խորհրդ 15 անդամներից 11-ը՝ բ.գ.դ. պրոֆեսոր Գ.Գ. Օկոնը (ԺԴ.00.01), բ.գ.դ. Կ.Կ. Առուստամյանը (ԺԴ.00.01), բ.գ.դ., պրոֆեսոր Մ.Մ. Տեր-Ստեփանյանը (ԺԴ.00.16), Ս.Պ. Բարսեղյանը, բ.գ.թ. Ա.Ա. Գասպարյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ա.Հ. Խաչատրյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Մ.Ս. Թադևոսյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Է.Ս. Տոտոյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Հ.Պ. Ազարյանը (14.00.16), բ.գ.թ. Ս.Ի. Ազիզյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ն.Գ. Ֆրոլովան (ԺԴ.00.01):

Մոր և մանկան առողջության պահպանման
գիտահետազոտական կենտրոնի փոխտնօրեն
գիտության գծով, բ.գ.դ. Կ.Կ. Առուստամյան

Կ.Կ. Առուստամյանի ստորագրությունը հաստատում եմ
Մոր և մանկան առողջության պահպանման
գիտահետազոտական կենտրոնի կադրերի
բաժնի վարիչ՝ Ս.Ս. Գրիգորյան